Վարուցաց

ՄԱՅԻՍ 15 - 25 2014 Թ. ԹԻՎ 12 (2034)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կառավարության որոշմամբ՝ գործադիրը մինչև 2017թ. մայիսի 27-ը հետաձգել է «Մավաս գրուպ» ՍՊԸ կողմից իրականացվող ներդրումային ծրագրով ներմուծվող 200 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքների ԱԱՀ վճարման ժամկետը: Ընկերությունը նախատեսում է Կոտայքի մարզում կառուցել 3 հա ջերմոցային տնտեսություն՝ այն հագեցնելով ժամանակակից սարքավորումներով և կատարելով շուրջ 1 մլրդ 250 մլն դրամի ներդրում նաև, ստեղծել մոտ 60 աշխատատեղ:

Փոփոխություններ և լրացումներ կատարելով իր նախկին որոշումներից մեկում՝ գործադիրն իրավականորեն կարգավորել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության հետ կապված հարաբերությունները՝ դրանք համապատասխանեցնելով «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելուն:

Կառավարության որոշմամբ՝ Տավուշի մարզի Սևքարի միջնակարգ դպրոցի 2-րդ մասնաշենքը հետ է վերցվել այդ ՊՈԱԿ-ից և 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով, հանձնվել «Դարպաս գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվին՝ «Փոքր ֆերմերների բարելավումը գյուղատնտեսական կոոպերատիվների և արժեշղթայի զարգացման միջոցով» ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանն առողջապահության և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարներ՝ Արմեն Մուրադյանի և Արտեմ Ասատրյանի, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ուղեկցությամբ, այցելել է Կոշ համայնք:

Կառավարության ղեկավարը նախ եղել է համայնքի «Արմենակ և Աննա Թադևոսյաններ» բժշկական կենտրոնում, որին կից իրականացվում է մշտական բժշկական վերահսկողություն՝ վերականգնողական ծառայություններ տրամադրելով հաշմանդամություն ունեցող երեխաներին: Հովիկ Աբրահամյանը ծանոթացել է ստեղծված պայմաններին և նորագույն սարքավորումներին:

Կենտրոնը հագեցած է երեխաների ֆիզիկական ակտիվությանը նպաստող, տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ֆիզիոթերապիայի և անձնական խնամքի համար անհրաժեշտ սարքավորումներով և դիտակտիկ նյութերով: Կենտրոնն ունի նաև գերժամանակակից ախտորոշման և ֆիզիոթերապիայի սարքավորումներ, ժամանակակից շտապօգնության մեքենա:

Կառավարության ղեկավարը կարևորել է երկրում նման հաստատությունների առկայությունը և ողջունել կենտրոնի հիմնման գաղափարը: Հովիկ Աբրահամյանը կենտրոնի ղեկավարներին կոչ է արել ներկայացնել պետության հետ համագործակցության ծրագիր՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ փոխգործակցությամբ իրականացնելու համար: Միաժամանակ, վարչապետը կարևորել է հաշմանդամների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հաստատությունը, որի կառուցման համար ներդրվել է 4 մլն դոլար, հնարավորություն ունի միաժամանակ սպասարկել 50 երեխայի: Ցերեկային խնամքի կենտրոնում գտնվելու ընթացքում, երեխաները ստանում են վերականգնողական (ֆիզիոթերապիա, ակվաթերապիա), լոգոպեդի, հոգեբանի ծառայություններ, 2-անգամյա սնունդ: Նրանք հնարավորություն ունեն նաև հանգստանալ իրենց համար հարմարեցված ննջասենյակներում:

Այնուհետև վարչապետն այցելել է Կոշի հիմնանորոգված մանկապարտեզ, որը նախատեսված է 92 երեխայի համար: Մանկապարտեզը հիմնանորոգվել,

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽՇԱՀԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնությունում Կանադայի դեսպանության գյուղատնտեսության և պարենի հարցերով խորհրդական Ջենիֆեր Ֆելոուզին և «Կանադական արտահանումների զարգացման կորպորացիայի» (EDC) Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում գլխավոր ներկայացուցիչ Ջոն Պլեյսին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ հյուրերը նշել են, որ առաջին անգամ են Հայաստանում և հետաքրքրված են Հայաստանի ագրոարդյունաբերական ոլորտի հետ փոխշահավետ համագործակցություն ծավալելու հեռանկարով: Ներկայացնելով իրենց կառույցը և նշելով, որ ԱՊՀ մի քանի երկրներում արդեն հաջողությամբ գործում են կանադական մի շարք ընկերություններ՝ պարոն Պլեյսն ապագայի համար չի բացառել վերջիններիս գործունեությունը նաև Հայաստանում: Նա նշել է, որ բացի արտահանումներին ուղղված ծրագրերից, EDC-ն ապահովագրական և բանկային ծառայություններ է մատուցում նաև կանադական մասնակցությամբ ընկերություններին:

Նախարար Սերգո Կարապետյանը, հակիրճ ներկայացնելով հանրապետության գյուղատնտեսության վիճակը, նշել է, որ այն արդեն զարգացման նոր փուլ է մտել և այժմ կարևոր է աշխարհի առաջատար երկրների փորձի ընդօրինակումն ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը մեր երկրում: Այդ առումով, գյուղատնտեսության բնագավառում Կանադայի հետ համագործակցության հեռանկարը նա օգտակար և իրատեսական է գնահատել: «Մեզ մոտ նպաստավոր պայմաններ են ստեղծվել գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ կատարողների համար: Այդ նպատակով՝ հրավիրում ենք նաև կանադացի ներդրողներին՝ տեղում պայմաններին ծանոթանալու և մեր գյուղատնտեսության մեջ ներդրումներ կատարելու»- նշել է նա:

Կողմերը համակարծիք էին, որ ՀՀ Մաքսային միությանն անդամակցելու պարագայում, զգալիորեն կմեծանա այլ պետությունների, այդ թվում՝ նաև Կանադայի, ներդրողների ակտիվությունը Հայաստանում:

Համագործակցությունն իրավական հիմքերի վրա դնելու նպատակով, նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է քննարկել երկու երկրների գյուղատնտեսության նախարարությունների միջև համագործակցության մասին համաձայնագիր կնքելու նպատակահարմարության հարցը:

ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի ղեկավար Ժան Միշել Հեփփին:

Հանդիպման նպատակը՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին ծրագրով Հայաստանի մարզերում իրականացված աշխատանքներին անդրադառնալն ու երկրորդ ծրագրի բանակցային գործընթացին առնչվող հարցերի քննարկումն էր: Պարոն Միշել Հեփփին շնորհավորել է նախարարին՝ վերանշանակվելու կապակցությամբ, մաղթելով նրան արդյունավետ գործունեություն և նշել է, որ ուրախ է առաջիկայում ևս համատեղ աշխատելու հնարավորության համար:

Նախարար Սերգո Կարապետյանը, շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, դրական է գնահատել առաջին ծրագրի արդյունավետությունը՝ նշելով, որ տնտեսված միջոցների հաշվին հնարավոր է եղել 55-ի փոխարեն ծրագիրն իրականացնել հանրապետության 90 համայնքներում՝ ստեղծելով գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնց արդյունքում՝ ավելացել են գյուղացիների եկամուտները, բարելավվել գյուղատնտեսական հումքի իրացման պայմանները, ավելացել գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը:

Քննարկման արդյունքում կողմերը կարևորել են ծրագրի շարունակականությունը և երկրորդ փուլի իրականացումը: Քննարկվել են նաև ապահովագրական համակարգի ներդրման, կլիմայի փոփոխություններով պայմանավորված աշխատանքների և առաջիկա ծրագրերին առնչվող հարցեր:

1

ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

կահավորվել և բարեկարգվել է գերմանաբնակ բարերար Ռազմիկ Թադևոսյանի տրամադրած միջոցներով: Նշված աշխատանքների իրականացման համար ներդրվել է 160 մլն դրամ: Վարչապետը շրջայց է կատարել մանկապարտեզով՝ ծանոթացել նախադպրոցական տարիքի երեխաների համար ստեղծված պայմաններին:

Հովիկ Աբրահամյանը շնորհակալություն է հայտնել բարերարներին և մանկապարտեզի հիմնանորոգման նախաձեռնողներին՝ երեխաների համար նման բարձրակարգ պայմաններ ստեղծելու համար: Կառավարության ղեկավարը զրուցել է նաև Կոշի բնակիչների հետ՝ ծանոթացել նրանց հուզող խնդիրներին, պատասխանել տարբեր հարցերի:

ՈՒՄՈՒՅՈՒՄ

ԿԱՐԵՎՈՐ ԴԱՍԸՆԹԱՑ

Վերջին տարիներին Արմավիրի և Արարատի մարզերի մի շարք համայնքների գյուղացիական տնտեսություններին լուրջ վնաս են հասցնում կարտոֆիլի և լոլիկի ցեցերը:

Այդ վնասատուների դեմ արդյունավետ պայքար սկսելու համար, պարբերաբար կատարվում են համալիր միջոցառումներ, անցկացվում սեմինարներ, կազմվում և գյուղացիական տնտեսություններին տրամադրվում են խորհրդատվական թերթիկներ: ԳԱՄԿ-երի մասնագետներն այցելություններ են կատարում կարտոֆիլի և լոլիկի մշակությամբ զբաղվող համայնքներ:

Օրերս Արմավիրի և Արարատի մարզերում տեղի ունեցան սեմինարներ՝ «Լոլիկի և կարտոֆիլի ցեցերի նույնականացման, մոնիթորինգի, կանխարգելման և պայքարի միջոցներ» թեմայով: Սեմինարի նպատակն էր՝ մասնակիցներին ներկայացնել կարտոֆիլի և լոլիկի ցեցերի դեմ ինտեգրացված պայքարի համալիր միջոցները: Սեմինարին մասնակցում էին ՀՀ ԳՆ գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի պետ Ջ. Գաբրիելյանը, ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Ա. Հայրապետյանը, ՀԱԱՀ-ի Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ Ա. Տեր-Գրիգորյանը, ԳԱՄԿ-երի տնօրեններ՝ Լ. Ալեքսանյանը, Գ. Գալստյանը, ԳԱՄԿ-երի աշխատակիցներ և ֆերմերներ: Ա. Տեր-Գրիգորյանը տեսաֆիլմի միջոցով ներկայացրեց կարտոֆիլի և լոլիկի ցեցերի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, զարգացումը, սննդառությունը, վնասակարությունը, տարածվածությունը և այլն: Այնուհետև, ներկայացրեց կարտոֆիլի ցեցի ուսումնասիրությանը և պայքարի միջոցառումներին առնչվող ծրագրերը: Կարևորեց ինտեգրացված պայքարի միջոցառումների կիրառումը թե՛ դաշտում, և թե՛ ջերմատներում, ներկայացրեց արդեն իսկ մշակված միջոցառումներն՝ ըստ հերթականության՝ սկսած կարանտին միջոցառումներից, էնտոմոֆագերի կիրառումից մինչև քիմիական պայքարը: Կարևորագույն միջոցներից մեկը նաև ֆերոմոնային թակարդների կիրառությունն է, որի հիմնական նպատակն է՝ որոշել վնասատուների բազմացման շրջանը, որը հնարավորություն կտա պայքարել վերջիններիս դեմ:

Ա. Տեր-Գրիգորյանը կարևորեց նաև լոլիկի և կարտոֆիլի ցեցերին տարբերակելու հարցի կարևորությունը: Թեպետ արտաքնապես գրեթե իրարից չտարբերվող այդ վնասատուները տարբեր կենսակերպ ունեն, սակայն դրանց դեմ պայքարի միևնույն միջոցառումները չի կարելի կիրառել: Նա, պայքարի համալիր միջոցառումների շրջանակում, կարևորեց նաև ցանքաշրջանառության դերը: Վերջում, պարոն Տեր-Գրիգորյանը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին և հույս հայտնեց, որ հետագա համագործակցության շնորհիվ, հնարավորություն կստեղծվի կարտոֆիլի և լոլիկի ցեցի դեմ արդյունավետ պայքար կիրառել:

ՈՌՈԳՈՒՄ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հայաստանը, Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիքի միջոցով, 15 մլն եվրո դրամաշնորհ կստանա:

Ֆինանսների նախարարությունում ստորագրվել է «Համայնքային ենթակառուցվածքների Ծրագիր II-Փուլ 3 (ԵՄ ՀՆԳ-ի բաղկացուցիչ)- Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի իրականացման ֆինանսավորման համաձայնագիրը, որը ստորագրել են ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը, ՀՀ ՏԿՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանը, ՀՀ-ում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեան, ինչպես նաև՝ Վերականգնման վարկերի բանկի (KFW) համայնքային ենթակառուցվածքների բաժնի պետ Առնե Գուսը և KFW բանկի տարածաշրջանային ղեկավար Լարս Օերմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը 73 մլն եվրո է, այդ թվում՝ 30 մլն եվրո վարկ՝ KFW բանկից, 2.5 մլն եվրո դրամաշնորհ՝ KFW-ից, 25.5 մլն եվրո վարկ՝ Եվրոպական ներդրումային բանկից և 15 մլն եվրո դրամաշնորհ՝ ԵՄ ՀՆԳ-ից: Վերջինս տրամադրվում է KFW-ի միջոցով: Դրամաշնորհային միջոցներից 10 մլն եվրոն կօգտագործվի գյուղերում խմելու ջրի մատակարարման և ոռոգման համակարգերի վերականգնման նպատակով, 2 մլն եվրոն կուղղվի Արմավիրում ոռոգման, կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցմանը, իսկ 3մլն եվրոն՝ չորս ջրային ընկերությունների հետ Կառավարման պայմանագրի վճարմանը: Դրանք են՝ «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» ՓԲԸ-ները:

ԿՐԹԱԿԱՆ

ԳԻՆՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի-Վի-էն Գինու ակադեմիան, որի համահիմնադիրներն են «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը և «Սեմինա Քոնսալթինգ» ՓԲԸ-ն, առաջարկում է գինու և գինեգործության վերաբերյալ կառուցվածքային և ժամանցային ուսուցման ընդգրկուն հարթակ:

«Սեմինա Քոնսալթինգի» հիմնադիր և «Արմավիրի խաղողի այգիներ» ընկերության (որը հայտնի է իր «Կարաս» գինիներով) ծրագրերի ղեկավար Վահե Քեուշգուերյանը ԱՀԿՄԿ հիմնադրամում անցկացրեց գինու հիմունքների վերաբերյալ 1-ին մակարդակի ուսուցման դասընթաց:

Դասընթացը նախատեսված էր գինու սիրահարների համար: Ըստ պրն Քեուշգուերյանի, դասընթացն ապահովելու է «բազային, բայց էական գիտելիքներ այն մասին, թե ինչ է գինին, որտեղից են գալիս ամենահայտնի պիտակները, ինչպես նավարկել գինու աշխարհի ծովում, ինչպես

է այն պատրաստվում և ինչպես է պետք ճիշտ ձևով խմել և դրանով իսկ՝ վայելել համուհոտերի այն ամբողջ հարստությունը, որ տալիս է գինին»:

Երեքական ժամ տևողությամբ դասախոսություններից յուրաքանչյուրը բաժանված է տեսական և գործնական մասերի. տեղեկատվական մասից և դրան հաջորդող հարցուպատասխանից հետո ներկայացնողները, մասնակիցների հետ միասին, համտեսում են տարբեր գինիներ, որոնց մասին խոսվել է տեսական դասախոսությունների ժամանակ:

Թեմաները ներառում են՝ գինիների տիպաբանությունը, գինու աշխարհի ընկալումը, բնական գործոնների հանրագումարը և գինեգործությունը, համտես և մատուցում: Ուսուցման առաջին դասընթացին հետևած քննության արդյունքներով, մասնակիցների մեծ մասը ստացավ Ի-Վի-էն գինու ակադեմիայի «Գինու հիմունքներ» 1-ին մակարդակի վկայական: Ներկայումս ԱՀԿՄԿ հիմնադրամում ընթանում է 2-րդ մակարդակի դասընթացը:

Վահե Քեուշգուերյանը ծնվել է Սիրիայում, մեծացել Լիբանանում, ապրել Իտալիայում և ԱՄՆ-ում: Նա գինու բիզնեսով զբաղված 1990-ից, արտերկրում ունեցել է խաղողի այգիներ և գինեգործարաններ, սակայն, ի վերջո, նախընտրել է հաստատվել նախնիների հայրենիքում: Իր գիտելիքներով և հսկայական միջազգային փորձով՝ Վահեն անգնահատելի մասնագետ է՝ հայաստանյան ավելի քան 6000-ամյա գինեգործական արդյունաբերությունը վերազարգացնելու և ժամանակակից միջազգային շուկայում հայկական գինու համար առանձնահատուկ շուկայահատված ապահովելու նպատակով:

Սոս Ավետիսյան
ԱՀԿՄԿ հիմնադրամի հանրային կապերի մասնագետ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում քննարկվել են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի «Արժեքային շղթայի զարգացում» բաղադրիչի նախապատրաստական աշխատանքների շրջանակում միջազգային և տեղական խորհրդատուների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները»:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատասխանատուներից բացի, քննարկմանը մասնակցել են նաև «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» մասնագետներն ու նշված ծրագիրը նախապատրաստող խորհրդատուներ:

«Այս ծրագիրը մեզ համար շատ կարևոր է, քանի որ դրանով մենք ամբողջացնում ենք ողջ արտադրական շղթան: Իրականացված նման առաջին ծրագիրն արդյունավետ ընթացք է ունեցել, ուստի՝ և Համաշխարհային բանկի առաջարկությամբ, պատրաստվում ենք իրականացնել երկրորդ ծրագիրը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Ծրագրի մշակման հեղինակների կողմից մասնակիցների քննարկմանն են ներկայացվել կաթի, փավարի և ոչխարի մսի, մրգի, բանջարեղենի և մեղրի արտադրության ոլորտներում սննդի բիզնեսով զբաղվող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունները, ինչպես նաև նշված արժեշղթաներում հասցեագրվելիք համաֆինանսավորման առաջարկությունները: Քննարկվել են ծրագրի իրականացման համար առաջարկվող թիրախային ոլորտներն ու բաղադրիչների տեսակները: Հանձնարարվել է ծրագիրը նախապատրաստող խմբին և խորհրդատուներին, մինչև հունիսի 15-ը, միջազգային փորձի ուսումնասիրությամբ և տեղական պայմանների հաշվառումով, լրամշակել նախագիծը՝ ներկայացնելով ծրագրի իրականացման համար պահանջվող կոնկրետ առաջարկություններ:

«Մեր նպատակը փոքր արտադրություններն արդյունաբերական դարձնելն է: Ներկայացված ուսումնասիրություններում բացակայում են արժեշղթաների զարգացման համար պահանջվող առաջնահերթ թիրախները: Իսկ վերջիններիս ընտրության հարցում մենք սխալվելու իրավունք չունենք»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

ԾՐԱԳԻՐ

ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանն օրերս Շիրակի մարզի Բավրա համայնքում ներկա է գտնվել նորակառույց համայնքային կենտրոնի բացման արարողությանը: Ներկա էին նաև Շիրակի մարզպետ Ֆելիքս Յոլակյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը, արգենտինահայ բարերար Նշան Դևեջյանը, այլ հյուրեր:

Համայնքային կենտրոնը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրով՝ բարերար Նշան Դևեջյանի հովանավորությամբ: Նորակառույց բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոնում կգործեն գյուղապետարանը, բուժկետը, գրադարանը, համակարգչային սենյակը և հանդիսությունների սրահը: Կենտրոնի կառուցման ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 70 մլն դրամ: Դևեջյանների ընտանիքի ֆինանսավորմամբ, հիմնովին կահավորվել և համակարգչային տեխնիկայով է համալրվել նաև Բավրայի դպրոցը:

Ագրոլրատու
Մայիս 15 - 25, 2014 թ.
թիվ 12 (2034)

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈԼԻԿԻ ՃԵՃԻ / TUTA ABSOLUTA/ ԿԵՆՍԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վերջին երկու տարիներին, Արարատյան հարթավայրի որոշ համայնքներում հայտնաբերվել են կարտոֆիլի և լոլիկի ցեց վնասատուներ, որոնց բնորոշ է արագ տարածման ունակությունն ու վնասակարությունը: Կարտոֆիլի ցեցի կենսակերպի, տարածման ու դրա դեմ կիրառվող կանխարգելիչ միջոցառումների մասին բազմիցս անդրադարձել ենք «Ագրոլրատուի» նախորդ համարներում: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենակ Տեր-Գրիգորյանի այս հարցազրույցի թեման վերաբերում է լոլիկի ցեցի կենսաէկոլոգիական առանձնահատկություններին և դրանց դեմ պայքարի միջոցառումներին:

-Պրն. Տեր-Գրիգորյան, ի՞նչ աշխարհագրական տարածվածություն ունի ցեցը և ի՞նչ չափերի է հասնում թեփուկաթևավորների կարգին պատկանող այդ միջատի հասցրած վնասը՝ կոնկրետ լոլիկի պարագայում:

-Ցեցի հայրենիքը Հարավային Ամերիկան է: Տարածման ու հարմարվողականության ունակությամբ վնասատուն այսօր արդեն գրանցված է աշխարհի բոլոր մայրցամաքներում: Մեր տարածաշրջանում վնասատուն արձանագրված է՝ Ռուսաստանի Դաշնությունում (Կրասնոդարի երկրամաս), Թուրքիայում: Վնասատուն սնվում է մորմազգի մշակաբույսերով՝ կարտոֆիլով (պալարներ և վեգետատիվ մաս), սմբուկով, ծխախոտով, լոլիկով (վեգետատիվ մաս և պտուղ), պղպեղով, ինչպես նաև մորմազգի մոլախոտային բույսերով՝ սև մորմով, թմբրախոտով, շիկատակով (բելլադոննա), հարսնախոտով (ֆիզալիս), արջընկույզով, սև բանգիով և այլ մոլախոտերով: Ցեցն առավել մեծ վնաս է հասցնում լոլիկին՝ ինչպես բաց դաշտում, այնպես էլ՝ ջերմատներում:

Ըստ գրականության տվյալների՝ ԱՄՆ-ում, դաշտային պայմաններում, ցեցի հասցրած վնասը լոլիկի պտուղներին հասնում է 57 %-ի: Բույսերի վերգետնյա մասերի վնասվածության դեպքում՝ տերևների վրա նկատվում են ականներ (դրանք ականող ճանճի ականներից տարբերվում են մուտքի մոտ եղած արտաթորանքի առկայությամբ), որոնք առաջանում են երիտասարդ թրթուրների սննդառության արդյունքում, հետագայում, միանալով իրար՝ պատճառ դառնում տերևների և ցողունների չորացմանը: Լոլիկի պտուղների վրա և պտղամսում առաջացած գորշ անցուղիները, փտման երևույթները, թառամումը և արտաթորանքի հետքերն այն դարձնում են ոչ պիտանի՝ սննդում օգտագործելու համար:

-Որո՞նք են լոլիկի ցեցի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները:

-Հասուն թրթուրը կամ հարսնյակը ձմեռում է հողի մակերեսային շերտում, բուսական մնացորդների տակ: Թիթեռների թռիչքը սկսվում է վաղ գարնանն ու շարունակվում մինչև հոկտեմբերի վերջը: Դրանք ակտիվանում են մայրամուտից հետո և լուսաբացին: Թիթեռների կենսագործունեությունը շարունակվում է ջերմաստիճանների լայն միջակայքում՝ +8-35^{0}C, ինչը վկայում է դրանց բարձր հարմարվողականության մասին: Հասուն թիթեռները ցերեկը հիմնականում թաքնվում են բույսերի տերևների ստորին մասում: Թիթեռը կարող է ապրել երեք շաբաթից ավելի: Էգը ձվադրում է զուգավորումից հետո՝ առաջին օրվա ընթացքում՝ լոլիկի տերևների ու պտուղների վրա: Մեկ էգը դնում է 160-200 ձու: Սաղմնային զարգացման ընթացքը (ձվից մինչև թրթուրների դուրս գալը), կախված ջերմաստիճանից, տևում է 4-ից 40 օր: Ձվից նոր դուրս եկած թրթուրներն ակտիվորեն տեղաշարժվում են: Ջերմաստիճանից կախված՝ թրթուրի զարգացումը տևում է 11-ից 14 օր, այդ ընթացքում այն մաշկափոխվում է 4 անգամ: Ավարտելով սնուցումն ու զարգացումը՝ դրանք սովորաբար լքում են տերևներն ու ցողունները և, տարբեր թաքստոցներում, ոստայնաթելից գործում բոժոժ, որի մակերեսին կպչում են հողի և աղբի փոքրիկ գնդիկներ: Դրանք վերափոխվում են հարսնյակի՝ 3-4 օր հետո: Հարսնյակի փուլը շարունակվում է 6-8 օր: Կյանքի տևողությունը՝ ձվից մինչև հասուն փուլ, ամռանը տևում է 22-30 օր, իսկ ձմռանը՝ 2-4 ամիս: Վնասատուի բոլոր փուլերի համար մահացու են -4^0 C-ից ցածր և +36^0 C-ից բարձր ջերմաստիճանները: Կախված բնակլիմայական պայմաններից՝ ցեցը բաց դաշտում տալիս է 4-13 սերունդ:

-Ինչպե՞ս հայտնաբերել և ճանաչել այդ վնասատուին:

-Դաշտային պայմաններում, վեգետացիայի ընթացքում, ցեցի հայտնաբերման համար, ստուգման են ենթակա մորմազգիների ընտանիքին պատկանող մշակովի և վայրի բոլոր բույսերը, իսկ պահեստարաններում, վաճառակետերում, տնամերձերում՝ մորմազգի բույսերի պտուղները: Ցեցի օջախների ժամանակին հայտնաբերման և դրանց սահմանագծման համար արդյունավետ է ֆերոմոնային թակարդների օգտագործումը:

-Պայքարի ի՞նչ միջոցառումներ պետք է կիրառել:

-Ցեցի պատճառած վնասը նվազագույնի հասցնելու համար՝ անհրաժեշտ է կիրառել կանխարգելիչ, ագրոտեխնիկական, քիմիական, կենսաբանական, մեխանիկական կամ պայքարի ինտեգրացված մեթոդը: Չի՛ թույլատրվում ցեցով վարակված տարածքներից լոլիկի և այլ մորմազգիների պտուղներ ներմուծել վարակազերծ գոտիներ: Անհրաժեշտ է մորմազգիների համար նախատեսված դաշտերը շրջափակել հացազգի բարձրաճ մշակաբույսերի ցանքերով (տարածական մեկուսացում), որը կսահմանափակի այլ տարածքներից վնասատուի ներթափանցումը: Վեգետացիայի ընթացքում, ֆերոմոնային թակարդների միջոցով, պետք է իրականացնել մորմազգիների ցանքերի մշտադիտարկում (մոնիթորինգ), թակարդները պետք է տեղադրել դաշտերի եզրերին՝ յուրաքանչյուր 100 մ վրա, ցանկալի է ճանապարհի երկայնքով (1 թակարդ՝ 1 հեկտարի հաշվով), կապելով փայտյա ցցերին, ընդ որում՝ թակարդի հատակը պետք է գտնվի հորիզոնական վիճակում՝ 40-50 սմ բարձրության վրա: Թակարդների միջոցով անցկացված ուսումնասիրությունները հնարավորություն կտան ճիշտ որոշել պայքարի միջոցառումների ժամկետները:

- Ի՞նչ ագրոտեխնիկական միջոցառումներ պետք է կատարել:

-Բերքահավաքից հետո, ուշ աշնանը, պետք է կատարել խորը վար: Իսկ հունվար ամսին, երբ հողը սառած է՝ կրկնավար, որի արդյունքում՝ վարելաշերտի ստորին հատվածում պատսպարված վնասատուներն ու հիվանդությունների հարուցիչները տեղափոխվելով հողի մակերես՝ ոչնչանում են: Կարևոր է ցանքաշրջանառության կիրառումը մորմազգիներով (կարտոֆիլ, լոլիկ, պղպեղ, սմբուկ) նախկինում զբաղեցված տարածքներում, նաև պետք է բացառել նույն ընտանիքի մշակաբույսերի մշակությունը:

- Պրն. Տեր-Գրիգորյան, մի քանի խոսքով ներկայացրեք, պայքարի քիմիական և կենսաբանական ի՞նչ միջոցներ պետք է կիրառել:

-Վնասատուի հայտնաբերման դեպքում, հերթափոխային եղանակով, անհրաժեշտ է օգտագործել հետևյալ միջատասպան միջոցները (ինսեկտիցիդները). Բելտ (1,0 լ/հա), Մատչ (0,4 /հա), Ադմիրալ (0,5 մլ/հա), Կոնֆիդոր (0,3 լ/հա), Կոնֆիդոր մաքսի (0,1 լ/հա), Կալիպսո (0,3 լ/հա), Դանադիմ 400 Խ.Է. (2,0 լ/հա), Դեցիս 2,5% Խ.Է. (2,0 լ/հա), Զոլոն 35 (1,5-2,0 լ/հա), Արրիվո Խ.Է. (0,16 լ/հա), Շերպա 25 Խ.Է. (0,16 լ/հա) և բարձր կենսաբանական արդյունավետություն ունեցող այլ նյութեր: Ի դեպ, բարձր արդյունավետություն են ապահովում նաև Ֆիտովերմ Մ (0,5%) + Մատչ (0,05 %), Ֆիտովերմ Մ (0,5%) + Ադմիրալ (0,05 %), Ֆիտովերմ Մ (0,5%) + Ակտարա (0,08 %), Ֆիտովերմ Մ (0,5%) + Կոնֆիդոր (0,1 %) բույսերի պաշտպանության միջոցների համակցումները: Կենսաբանական պատրաստուկներից արդյունավետ են՝ Բիտօքսիբացիլինը (3-4 լ/հա), Լեպիդոցիդը (3-4 լ/հա): Մշակումները հարկավոր է կատարել վնասատուի թիթեռների բացահայտվելուց անմիջապես հետո՝ չսպասելով թրթուրների ի հայտ գալուն: Խորհուրդ է տրվում միևնույն միջատասպան միջոցն օգտագործել առավելագույնը երկու անգամ: Միջատասպան քիմիական միջոցներով մշակումներն անհրաժեշտ է իրականացնել 10-15, իսկ կենսապատրաստուկներով՝ 6-8 օր ընդմիջումներով:

- Իսկ պայքարի ի՞նչ միջոցառումներ պետք է կիրառել ջերմատներում:

-Ջերմատունը և դրա անմիջական շրջակայքը պետք է մաքրել բույսերի մնացորդներից և մոլախոտերից, որպեսզի կանխվի վնասատուի տեղաշարժը նոր բույսերի վրա: Օդափոխվող բացվածքների վրա պետք է տեղադրել մանր անցքերով ցանցեր, իսկ մուտքի դռները՝ մեկուսացնել երկշերտ, մանր անցքեր ունեցող ցանցային վարագույրներով՝ դրսից ցեցի թիթեռների թափանցումը կանխելու նպատակով: Ցանքից առաջ սածիլանոցները պետք է ախտահանել ծծմբով՝ ծխեցման եղանակով կամ ախտահանիչ այլ պատրաստուկներով, իսկ ցանքից անմիջապես հետո՝ սածիլանոցում տեղադրել մեկ ֆերոմոնային թակարդ: Սերմերի ծլելուց հետո, ամեն օր պետք է ստուգել սածիլների վիճակը՝ ուշադրություն դարձնելով բույսերի գագաթնային մասերին, քանի որ ցեցը (թրթուր), ի սկզբանե, վնասում է գագաթները, ապա՝ տերևները: Հայտնաբերելուց անմիջապես հետո անհրաժեշտ է կատարել բուժում՝ սրսկման եղանակով: Պայքարի համար կարելի է օգտագործել բույսերի պաշտպանության Ֆիտովերմ Մ (40 մգ) + Մատչ (10 մգ) կամ Ֆիտովերմ Մ (40 մգ) + Ադմիրալ (4-5 մգ) պատրաստուկները՝ 100 լ ջրում լուծելու համար: Անհրաժեշտության դեպքում՝ մշակումները կրկնել 7-10 օր պարբերականությամբ: Սածիլների տեղափոխումից 3-4 օր առաջ, ջերմատունը պետք է ախտահանել ծծմբով՝ ծխեցման եղանակով, կամ այլ միջոցներով, իսկ ջերմատան կողապատերը, եթե քարե շարվածքով են, պետք է սպիտակեցնել կրակաթի լուծույթով: Ջերմատներում, մինչև սածիլացումն անհրաժեշտ է 1000 քմ-ի հաշվով, տեղադրել 3-4 ֆերոմոնային թակարդներ, ինչպես նաև միջատաբանական սոսնձով պատված տարբեր գունային ժապավեններ:

Նշված թակարդների և կպչուն ժապավենների տեղադրումից հետո պետք է կատարել հաճախակի դիտարկումներ՝ ցեցի թիթեռների առկայությունը բացահայտելու համար: Բարձր արդյունավետություն է ապահովում լուսային-էլեկտրական լարմամբ թակարդների կիրառումը՝ գիշերային ժամերին: Ջերմատանը, սածիլացումից հետո, ամեն օր պետք է ստուգել բույսերի տերևներն ու գագաթները: Եթե, մեկ շաբաթվա ընթացքում, նկատվում են ցեցի թրթուրից վնասված տերևներ, ապա անհրաժեշտ է կատարել բուժում՝ վերոհիշյալ պատրաստուկների նշված չափաբաժիններով: Վնասված բույսերի բացակայության դեպքում, խորհուրդ է տրվում, 20 օր հետո, կատարել կանխարգելիչ բուժում: Բույսերի վեգետացիայի ամբողջ ընթացքում, ցեցի թրթուրից վնասված տերևները պետք է կտրել և հեռացնել: Լավագույն արդյունք ապահովելու համար՝ պետք է պայքարի բոլոր միջոցառումները կատարել ժամանակին:

Հարցազրույցը՝ Նելլի Սահակյանի

ՃԳՆԱԺԱՄՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՑՈՐԵՆԻ ԳՆԵՐԸ

Ցորենի համաշխարհային գները հասել են առավելագույնի՝ Ուկրաինայի հարավ-արևելքում քաղաքական ճգնաժամի խորացման ֆոնի վրա: Դրա մասին հաղորդում է Bloomberg վերլուծական գործակալությունը:

Ցորենի բուշելի արժեքը Ֆրանկֆուրտի բորսայում բարձրացել է 2,2 %-ով և հասել մինչև 7,32 ԱՄՆ դոլարի՝ մեկ բուշելի համար, որը համապատասխանում է (մոտ 272 ԱՄՆ դոլար)՝ մեկ տոննայի համար: Այս ցուցանիշը առավելագույնն է համարվում՝ սկսած նախորդ տարվա մայիսից: Այդ նույն ժամանակամիջոցում եգիպտացորենի արժեքն ավելացել է 0,4%-ով և հասել մինչև 5,01 ԱՄՆ դոլարի՝ մեկ բուշելի համար (մոտ 197 ԱՄՆ դոլար՝ մեկ տոննայի համար):

Ուկրաինայում անկայունությունը հանգեցրել է նաև ոսկու գնի աճին, որը ներդրողների կողմից միշտ էլ դիտարկվում է որպես անվտանգ ակտիվներից մեկը: Թանկարժեք մետաղի մեկ ունցիայի արժեքն /28գ/ աճել է մինչև 1308 ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ ընթացիկ տարվա ապրիլի 1-ին ոսկու գինը տատանվում էր մեկ ունցիայի համար 1280 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Ուկրաինան հանդիսանում է ցորենի թվով վեցերորդ արտահանողն աշխարհում և երրորդը՝ եգիպտացորենի մատակարարման ծավալներով: 2013թ. հատիկավորների բերքը երկրում կազմել է 63 մլն տոննա, ընդ որում՝ ցորենի արտահանումն ուկրաինական բյուջե է բերել մոտ 273 մլն ԱՄՆ դոլար, որից 253 միլիոնը բաժին է ընկել ցորենին և եգիպտացորենին:

□□

ՍԵՄԻՆԱՐ

ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Օրերս Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (ԱԳԶԿ, CARD) հիմնադրամն իրականացրեց իր հերթական ծրագիրը, որը նվիրված էր անասնապահության ոլորտում երկու կարևորագույն խնդիրների՝ գյուղատնտեսական կենդանիների հաշվառմանը և այն հիվանդություններին՝ բրուցելյոզին և սիբիրախտին, որոնք միշտ էլ լուրջ խոչընդոտ են հանդիսացել բնագավառի զարգացմանը: Միջոցառումն, ինչպես և սրան նախորդողը, որ լուսաբանվել էր մեր կողմից 2013-ն ամփոփող համարներից մեկում, նախաձեռնվել էր «Heyfer International» կազմակերպության վրացական բաժանմունքի հետ համատեղ՝ Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ: Այս անգամ, բացի PUM-ից, աջակցում էին USDA-ը և AgrarMarkt Austria-ն: Այն կրում էր «Մեկ տարածաշրջան՝ մեկ առողջություն» խորագիրը և կարծես ակնարկում էր այն միտքը, որ մեր խնդիրները լուծելու ընթացքում, շուտափույթ կերպով, համաշխարհային մակարդակներ շոշափելուց առաջ, արժե տարածաշրջանում գործընկերներ գտնել: Այստեղ հարկ է նշել, որ ԱԳԶԿ (CARD) բազմանպատակ և շրջահայաց գործունեությունը նրա հաջողության կարևոր գրավականներից է՝ կողմնորոշվել իրավիճակում, գտնել գործընկերներ, ներգրավել լավագույն ուժերը, նոր տեխնոլոգիա ուսուցանելու հետ միաժամանակ՝ չմոռանալ, որ այս ամենը պետք է ծառայի նաև գյուղի աշխատավորի ընդհանուր մակարդակի բարձրացմանը և այլն:

Միջոցառումը, որ ընդգծված համաժողովի բնույթ էր կրում, իր առաջարկած գիտական մակարդակով և մասնակիցների պատրաստվածությամբ, միանգամայն համապատասխանում էր դրան. Ավստրիայից, ԱՄՆ-ից և Նիդերլանդներից հրավիրված փորձագետների և հետազոտողների պատկառելի խումբը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի ողջույնի՝ և փոխնախարար Ա. Հարությունյանի բացման խոսքից հետո, անմիջապես զեկույցների և քննարկումների բարձր մակարդակ առաջարկեց, որը հիմնականում պահպանվեց երկու հարևան հանրապետությունները ներկայացնող պաշտոնյաների և մասնագետների ստվար խմբի կողմից: Համաժողովի առաջին մասում մասնակիցները կենտրոնացան երկու հանրապետությունների համար այժմ խիստ կարևոր խնդիրների շուրջ՝ հաշվառում-համարակալում-տվյալների շտեմարանի ստեղծում և կառավարում՝ հատկապես երկու հարևան երկրների համար մեծ վտանգ ներկայացնող հիվանդությունների վերաբերյալ: ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության համակարգչային մասնագետ Միքայել Ավագյանը ներկայացրեց Any Pas ծրագրային համակարգը՝ մեզանում արդեն փորձարկված համակարգ, որտեղ մուտքագրումներ կարող են կատարվել անասնաբույժի, սպանդանոցի պատասխանատուի, վերահսկող տեսուչի կողմից: Ընդհանուր առմամբ, գրառումներ են լինելու անասնատիրոջ փոփոխության վերաբերյալ (առկա են լինելու նաև շատ համառոտ անձնական տվյալներ անասնատերերի մասին), կենդանու ծնողների, հիվանդությունների, անկման, անասնաբույժի վերաբերյալ: Գործընթացին հետևելու են տեսուչները:

Վրաստանի գլխավոր անասնաբույժ Միխեյիլ Սոխաձեյի կարծիքով՝ գործընթացը բավականաչափ բարդ է և լուրջ նախապատրաստական աշխատանք է պահանջելու: Ընդ որում՝ իր կարծիքով, որպես գլխավոր գործող անձ, նոր համակարգում հարկ է տեսնել ոչ թե տեսուչին, այլ անասնաբույժին: Ելույթ ունեցողը խիստ կարևորեց ինսիներատորների (հրկիզման սարքավորումների) առկայությունը, որոնց բացակայությամբ, ընդամենը թաղելով անկած կենդանուն, մենք դատապարտում ենք մեր սերունդներին՝ անորոշ ժամանակով հետաձգված պայթող ռումբերի հարևանությամբ ապրելուն:

Դոկտոր Ռուդոլֆ Մոզերը (Ավստրիա), խոսելով ուսուցման, տեղեկացման, հետազոտական համակարգերի փոխօգնության և համագործակցության մասին, նշեց, որ այստեղ առանձնապես հատուկ խնդիրներ չի տեսնում, բացի նրանից, որ նշված համակարգը մշտապես զարգացման և կատարելագործման կարիք ունի:

Բնագավառում շատ հայտնի Վալերի Ռագանը (ԱՄՆ Գյուղատնտեսության Դեպարտամենտ), ով անառարկելի հեղինակություն է համարվում շատ երկրներում, դիտարկելով քննարկվող հիվանդությունները որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա, կարևորեց հետևյալ հանգամանքները՝ որտեղից են եկել և որոնք են դրանց տարածման հավանական ուղիները, տեղեկացվածությունը, կանխարգելումը, ներխմբային մեկուսացումը, համագործակցությունը, հատկապես՝ միջգերատեսչական և միջկարգապահական: Ներկայացվեց 1930-1990 թթ. ԱՄՆ-ում ծավալված և, ի վերջո, հաջողությամբ պսակված պայքարը՝ փուլերով, վերահսկողության հետևողական ուժեղացումով:

Սրա տրամաբանական շարունակությունը հանդիսացավ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Թաթուլ Ստեփանյանի ելույթը. նա կանգ առավ գործընթացների իրականացման մեզանում կատարվող միջոցառումներին, այն է՝ նմուշառում-ախտորոշում-սպանդ՝ տարեկան երկու անգամ խոշոր և մեկ անգամ՝ մանր եղջերավոր կենդանիների համար սիբիրախտի դեպքում և նույնը, բուժման ավարտով՝ բրուցելյոզի դեպքում (արտերկրի փորձագետները գտնում են, որ այս դեպքում էլ սպանդն ավելի արդյունավետ կլիներ, ինչի մասին վկայում է իրենց երկրներում բրուցելոզի այլևս գոյություն չունենալու փաստը): Այնուհետև, պրն Ստեփանյանը նշեց համակարգի հզորացմանը խոչընդոտող երկու հանգամանք՝ իրավական նորմատիվների խիստ հնացած լինելը և անասնատիրոջ կողմից իր պասիվ վիճակի պահպանումը՝ պատկան մարմինների կողմից նրա մոտիվացման բարձրացման անկարողության պատճառով: Նրա կարծիքով՝ այս գործում անընդունելի է նաև «գաղտնիության» շղարշը, որն ավելի խուճապ է առաջացնում, քան օգնում:

Նիդերլանդների PUM միջազգային ուսումնական-խորհրդատվական կենտրոնը ներկայացնող Մարսել Միրկը կարևորեց ախտորոշում կատարող լաբորատորիայի նշանակությունը, որպես գլխավոր դերակատարի և համակարգողի: Դրա շնորհիվ, արդեն 10 տարի է, ինչ Նիդերլանդներում բրուցելյոզ գոյություն չունի, իսկ մեկ տասնյակ հիվանդությունների վերաբերյալ կատարվում է մշտադիտարկում՝ էլեկտրոնային վերահսկման միջոցով: Բռնկում նկատելուն պես, անմիջապես համապատասխան ծրագիր է մշակվում, որը հետևողականորեն իրականացվում է:

ՀՀ ԳՆ սննդի անվտանգության պետական ծառայության անասնաբուժական տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանն ու «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Գևորգյանը նշեցին անասնաբուժական ծառայությունների լուրջ մոդեռնացման և հզորացման կարիք ունենալու մասին, թվարկեցին անասնատերերի այն հոգեբանական առանձնահատկությունները, որոնք խոչընդոտում են ծառայության արդյունավետ աշխատանքը:

Փենսիլվանիայի համալսարանը ներկայացնող հետազոտող-փորձագետ Անատոլի Տումանովը ներկայացրեց հիվանդությունների վերաբերյալ օպերատիվ տեղեկացման EIDSS համակարգը, որի ստեղծման անմիջական մասնակիցն է եղել: Այն հատկապես արդյունավետ է գործում բրուցելյոզի և սիբիրախտի հայտնաբերման և ախտորոշման ժամանակ, քանի որ այստեղ չափազանց կարևորվում է վաղ բացահայտումը: Համակարգը թույլ է տալիս վարակված տարածքների քարտեզագրման և դրանցում վարակի լոկալիզացման միջոցով ստանալ իրավիճակի համակարգված պատկեր:

Եզրափակիչ օրն աշխատանքն ընթացավ խմբերի հետ, որոնք կազմվել էին նախօրոք՝ ըստ մասնագիտական նախասիրությունների ու մոտեցումների և ֆունկցիոնալ դերակատարումների: Երբ խմբային աշխատանքի արդյունքներն ամփոփվեցին և ներկայացվեցին, պարզ դարձավ, թե որքան դժվար է և միաժամանակ կարևոր ստեղծել վարակի տարածման ընդհանուր պատկեր և դերակատարների գործողությունների համաձայնեցված պլան, որտեղ բոլորը պետք է արդյունավետ գործեն: Կատարվեցին ինչպես ընդհանուր բնույթի եզրահանգումներ (օրինակ, խուսափել այն իրավիճակներից, երբ համապատասխան փաստաթուղթ չունեցող կառույցն իր վրա է վերցնում տեղեկացման, կամ որն ավելի վտանգավոր է, միջոցառումներ ձեռնարկելու նախաձեռնությունը, որից խուսափելու համար ներգրավված կառույցները պետք է հստակորեն բաշխեն դերակատարումները), այնպես էլ նշվեցին մասնավոր բնույթի, այս կամ այն իրավիճակին հատուկ՝ խոչընդոտող կամ նպաստող հանգամանքներ (հարևան երկիր արտահանվող մորթիները, որոնց լաբորատոր անալիզները A խմբի հիվանդությունների բացահայտման լրացուցիչ միջոց են հանդիսանում): Առանձին ուշադրության արժանացավ օգտակար և ոչ օգտակար, հասցեագրված և ոչ հասցեագրված տեղեկատվությունը տարբերելու և այն հասցեագրելու կարևորությունը:

Խիստ հագեցած օրակարգը ծավալվեց բարձր մակարդակով կազմակերպված առօրյայում, ինչն էլ ապահովեց միջոցառման բարձր արդյունավետությունը:

Վ Հ

Ագրոլրատու
Մայիս 15 - 25, 2014 թ.
թիվ 12 (2034)

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿՈՎԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆԸ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արհեստական սերմնավորումը կենդանիների վերարտադրությունը կազմակերպելու առաջավոր մեթոդ է: Այն միաժամանակ սելեկցիոն - տոհմային աշխատանքի շատ կարևոր բաղկացուցիչ մասն է, կենդանիների որակը բարելավելու գլխավոր միջոցը: Արհեստական սերմնավորման նշանակությունն այն է, որ դրա կիրառման դեպքում, հնարավոր է՝ քիչ թվով բարձր որակի արտադրողների օգտագործմամբ, ապահովել մեծ թվով բարձր որակով սերնդի ստացում: Մեկ ցուլից կարելի է ստանալ տասնյակ հազարավոր չափաբաժին (դոզա) սերմնահեղուկ և սերմնավորել հազարավոր կովեր, որը հնարավորություն է տալիս, կարճ ժամանակում, զանգվածային կարգով, բարելավել նախիրները, բարձրացնել դրանց մթերատվությունը և տոհմային որակը: Իհարկե, կովերի մթերատվությունը կարելի է բարձրացնել նաև դրանց կերակրման ու խնամքի բարելավման միջոցով, սակայն այդ բարձրացումը մինչև կենդանիների գենետիկական հնարավորությունների սահմաններում է: Որպեսզի փոփոխվեն այդ սահմաններն, անհրաժեշտ է իրականացնել սելեկցիոն-տոհմային միջոցառումներ, կատարել կենդանիների ընտրություն, զույգ ընտրություն, տրամախաչումներ, որտեղ կարևոր տեղ ունի լավագույն արտադրողների լայնամասշտաբ օգտագործումն արհեստական սերմնավորման միջոցով: Վերջինը նաև հնարավորություն է տալիս կարճ ժամկետներում բարձրացնել կենդանիների ցեղայնությունը, ավելացնել զտացեղ կենդանիների գլխաքանակը նախրում: Ապացուցված է, որ կերակրման ու խնամքի նույն պայմաններում, զտացեղ կովերից ստացվում է առնվազն 25-30% ավելի կաթ, քան՝ ցածր սերնդի խառնացեղերից:

Արհեստական սերմնավորումն ունի նաև բազմաթիվ այլ առավելություններ՝ մեծ չափով կրճատվում է ցուլերի պահանջը, դրանց կերակրման ու խնամքի վրա կատարվող ծախսերը, բացառվում է զուգավորման միջոցով զանազան հիվանդությունների տարածումը, շուրջ 10-15%-ով բարձրանում է նախրի հորթատվությունը, հնարավոր է դառնում աշխարհի ցանկացած երկրից ներկրել բարձր մթերատու ցեղերի սերմնահեղուկ և բարելավել մեզ մոտ բուծվող ցեղերը: Կովերի արհեստական սերմնավորումը Հայաստանի Հանրապետությունում կատարվում է 1935 թվականից: Այն ավելի մեծ ծավալներ է ընդունել 1975 թվականից հետո, երբ սերմնավորումը կատարվեց խորը սառեցված սերմնահեղուկի օգտագործմամբ:

1980-1990-ական թվականներին հանրապետությունում տարեկան սերմնավորվում էր շուրջ 200-210 հազար կով՝ կովերի ընդհանուր գլխաքանակի 60-65 տոկոսը: Սակայն, 1990 թվականից հետո, արհեստական սերմնավորումը համարյա դադարեցվեց: 1993 թվականին հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց (1993 թ., 9-ը սեպտեմբերի, թիվ 455) գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերի 50 %-ը կատարել պետական բյուջեի միջոցների հաշվին: Դա հնարավորություն տվեց որոշ չափով վերականգնել արհեստական սերմնավորման աշխատանքները: Սակայն, մինչև այժմ էլ, այն կատարվում է շատ սահմանափակ:

Շատ նախիրներում, կովերի արհեստական սերմնավորման բացակայության պայմաններում, օգտագործվում են ցածր մթերատվություն ունեցող ծնողներից ստացված, փոքր հասակի ու կենդանի զանգվածով բազմաթիվ ցուլեր, որոնք վատացնում են նախիրների որակը՝ տեղի տալով ազգակցական զուգավորումների և տարածելով մի շարք վարակիչ հիվանդություններ: Հատուկ պետք է ասել, որ՝ առանց արհեստական սերմնավորման լայն չափով կիրառման, անմտություն է կարծել, թե հնարավոր կլինի բարելավել կենդանիների տոհմային որակը և ընդհանրապես՝ զարգացնել տավարաբուծությունը հանրապետությունում: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է մոտակա տարիներին (մինչև 2015 թ.) արհեստական սերմնավորման ցանցում ընդգրկել տավարի զուգավորման ենթակա գլխաքանակի առնվազն 50%-ը (195 հազար կով և զուգավորման հասակի էգ մատղաշ): Հետևապես, պետք է վերականգվեն գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայանները: Առաջին հերթին՝ հանրապետության կենտրոնական Մխչյանի կայանը, հյուսիսային մարզերին սպասարկող (Լոռի, Շիրակ, Տավուշ) Ստեփանավանի կայանը և Սիսիանի կայանը՝ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի տնտեսություններին սպասարկելու համար:

Տոհմակայանները պետք է համալրել բարձր որակի ցուլերով (շուրջ 50 ցուլ), այդ թվում՝ ներկրված արտերկրից, այնուհետև ստանալ, կուտակել սերմնահեղուկ՝ հետագայում մատակարարելով սերմնավորման կետերին ու կայաններին: Պետք է վերակառուցվեն այդ տոհմակայանների անասնաշենքերը, լաբորատորիաները, հագեցվեն ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և ռեակտիվներով: Տոհմակայաններում անհրաժեշտ է ունենալ հմուտ մասնագետներ և սպասարկող անձնակազմ: Տնտեսություններում, կովերի սերմնավորումը կատարելու համար, անհրաժեշտ է ավելացնել տարբեր կարգավիճակով գործող սերմնավորման կետերի քանակը, տրամադրել տրանսպորտային, կապի և այլ միջոցներ: Կովերի արհեստական սերմնավորումը պետք է կատարվի անասնատերերի հետ կնքված պայմանագրերի հիման վրա՝ որոշակի վարձատրությամբ և պետության օժանդակությամբ: Տավարի որակական կազմի արագ բարելավման, մթերատվության բարձրացման նպատակով, շատ կարևոր է արտասահմանյան բարձր մթերատու ցեղերի (հոլշտին, ամերիկյան սելեկցիայի շվից, ջերսեյ և այլն) ցուլերի սերմնահեղուկի ներկրումը հանրապետություն: Պետք է նշել, որ վերջին 20 տարում խիստ կրճատվել են այդ ցեղերի օգտագործման ծավալները: Մոտակա տարիներին հարկավոր է այն ավելացնել՝ տարեկան ներկրելով շուրջ 200 հազար չափաբաժին սերմնահեղուկ, որից՝ 120 հազարը՝ ամերիկյան սելեկցիայի շվիցների, 60 հազարը՝ հոլշտին և 20 հազարը՝ ջերսեյ ցեղի ցուլերինը: Կովերի արհեստական սերմնավորման ծավալներն ավելացնելու համար, իհարկե, ֆինանսական միջոցներ են հարկավոր, սակայն, եթե ուզում ենք զարգացնել տավարաբուծությունը և բարձրացնել բնակչության ապահովվածության մակարդակը՝ կաթի և տավարի մսի նկատմամբ, ապա ներդրումներն անխուսափելի են:

Խ. Սիմոնյան
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ԴԻՄԱՆԿԱՐ

ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Երևանամյա Հարություն Հովհաննիսյանը բնակվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում: Նա գինեգործությունը սովորել է հորից, ով էլ, իր հերթին, հմտություններ և գիտելիք է ստացել իր հորից: Հարությունը գինեգործությամբ զբաղվում է շուրջ 3 տարի: Մինչև այդ, օգնել է հորը:

«Տան բակում բազմաթիվ խաղողի տնկիներ ունեինք: Կախեթ տեսակի խաղողի հանդեպ իմ սերը եկել է պապիկից»,- ասում է երիտասարդ գինեգործը: Նա ավանդույթը զարգացնում է և տարեցտարի լավացնում գինու որակը: Հարությունն օգտագործում է Իտալիայից և Ֆրանսիայից ներկրված ճզմիչ-չանչազատիչը, մամլիչ պրեսը, պոմպը, թորման սարքը և ֆիլտրերը: Արտադրված գինին օգտագործում է իր ընտանիքի համար, հարազատներին ևս բաժին է հանում, իսկ մի մասն էլ իրացնում մարզում:

Հարությունը ցանկանում է ապագայում ընդլայնել իր գործը՝ ստեղծելով ավելի մեծ արտադրամաս, նաև ունենալ սեփական բրենդը, հիմնել նոր այգիներ:

Գինեգործության առաջ ծառացած խնդիրներից Հարությունն առանձնացնում է արտադրվող գինիների որոշ մասի որակը: Սակայն նրա համար առավել կարևոր է գինու օգտագործման բազմադարյան մշակույթի վերականգնումը Հայաստանում: Նրա ցանկությունն է՝ Արարատյան դաշտում տեսնել գինեգործական խաղողատեսակի՝ Կախեթի աճեցման ավանդույթի վերականգնումը: Հարությունն ասում է, որ հիմա խաղողագործներն առավելապես աճեցնում են կոնյակի համար պիտանի տեխնիկական տեսակներ, այնինչ՝ Արարատը հայտնի է եղել իր Կախեթ տեսակի խաղողով, ինչպես օրինակ՝ Վայոց ձորը՝ Արենիով: Իսկ առավել անընդունելին, ըստ գինեգործի, Արարատյան դաշտում, խաղողի այգիների փոխարեն, կերային մշակաբույսերի մշակության միտումն է: Սակայն, նա հույս ունի, որ այդ ամենը ժամանակի հետ կնահանջի, և ժողովուրդը կվերադառնա գինեգործական տեսակի խաղողների աճեցմանը: Հարություն Հովհաննիսյանի խոսքով՝ դարեր շարունակ մեր նախնիները չեն սխալվել, երբ Արարատյան հարթավայրում զբաղվել են պտղաբուծությամբ և խաղողագործությամբ:

Մրցակիցների հանդեպ առավելությունների մասին խոսելիս, Հովհաննիսյանն ասում է, որ, առաջին հերթին, խաղողի բերքն ամբողջությամբ ինքն է աճեցնում և հավաքում: Նախօրոք տեղեկանալով, թե որ պտուղն է օգտագործվելու գինու մեջ, աճեցնում է առավել բարձրորակ խաղող: Բերքահավաքից անմիջապես հետո, խմորման համար ընտրվում են ամենաառողջ ողկույզներն ու հատիկները: Բերքը տուն բերվելուց և ճզմիչ-չանչազատիչ սարքավորման միջով անցնելուց հետո, ստացված հյութը լցվում է կաղնու տակառների մեջ, որտեղ և սկսվում է խմորումը:

Վերջերս Երևանի «Ականաթ» երիտասարդական ակումբում տեղի է ունեցել Հարությունի արտադրած գինիների համտես-շնորհանդեսը: Գինեգործը ներկայացրել էր 2 սպիտակ, 3 կարմիր՝ նռան և բալի գինիների տեսականին: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի խումբը Հարություն Հովհաննիսյանին բացահայտել է Փոքր Վեդի համայնքում՝ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում, տեղական տնտեսական զարգացման (ՏՏԶ) ծրագրի իրականացման ընթացքում, իսկ փորձագետները, որպես ՏՏԶ ծրագրի մի նախաձեռնություն, կազմակերպել են երիտասարդ գինեգործի արտադրանքի շնորհանդեսը:

www.smednc.am

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՋՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Այսօր հանրապետությունում յուրաքանչյուր ջրօգտագործող պետք է վճարի իր կողմից օգտագործված ջրի համար: Եվ որպեսզի ջրօգտագործողն իմանա, թե իրականում ինչ քանակությամբ ջուր է ստացել և դրա համապատասխան էլ վճարի՝ նա պետք է ծանոթ լինի չափման մեթոդներին և, հարկ եղած դեպքում, կարողանա չափել իր ստացած ջուրը: Մենք նպատակ ենք դրել օգնել ջրօգտագործողին՝ նրան տեղյակ պահելով և սովորեցնելով այն մեթոդներն ու եղանակները, որոնց միջոցով կարելի է չափել դաշտում տրվող ջրի քանակությունը:

«ՅԱԳՅՈՒՍ» կամ «Յագաթ» տիպի շարժական ջրաչափերով անցնող ելքերի որոշումը

H սմ, Q լ/վ	0	1	2	3	4	5	6	7	8	9
0						4.1	5.5	6.9	8.5	10.2
10	12.1	13.9	16.0	18.1	20.3	22.6	25.0	27.5	30.4	32.6
20	35.3	38.1	40.9	43.9	46.9	50.0	53.0	56.2	59.5	62.8

Դաշտում տրվող ջրի քանակությունը կարելի է չափել շարժական՝ մետաղից կամ փայտից պատրաստված սեղանաձև և եռանկյունաձև ջրթափերով, «Յարցև» ջրաչափական վաքի մոդիֆիկացիայի «ՅԱԳՅՈՒՍ» կամ «Յագաթ» տիպի շարժական ջրաչափերով, իսկ որտեղ հնարավոր չէ չափել վերը նշված եղանակներով, դաշտի գլխամասում կարելի է կառուցել 2 մ-ից ոչ պակաս երկարությամբ և 20-30 սմ խորությամբ բետոնե չափաբերված հուն, կամ չափել այլ եղանակներով: Այսօր հանրապետությունում ջրօգտագործողին մատակարարվող ոռոգման ջուրը հիմնականում չափվում է «ՅԱԳՅՈՒՍ» կամ «Յագաթ» տիպի շարժական ջրաչափերով: Ստորև ծանոթանանք այս շարժական ջրաչափերով ջրի չափման եղանակներին:

Չափումների իրականացման նախապատրաստումը: Ջրաչափերը պետք է տեղադրել հողային առուների և ժամանակավոր ոռոգիչների ուղիղ հատվածներում: Ջրաչափերով ճիշտ չափումներ կատարելու համար դրանց տեղադրման ժամանակ պետք է ապահովել հետևյալ պայմանները՝

- տեղադրման հատվածը պետք է ունենա որոշակի փոքր թեքություն,
- ջրի մուտքը ջրաչափի մեջ պետք է լինի արգելակող բուսականությունից զուրկ հատվածում,
- սեղանաձև և եռանկյունաձև ջրթափերը հարթաչափի միջոցով պետք է տեղադրվեն ուղղաձիգ դիրքով, իսկ «ՅԱԳՅՈՒՍ» կամ «Յագաթ» տիպի ջրաչափերի հատակը բերվի հորիզոնական վիճակի,
- ստորին բիեֆում՝ այսինքն ջրաչափից հետո, ջրի մակարդակը պետք է լինի հավասար կամ ցածր ջրաչափի շեմքից,
- չափաձողի O նիշը պետք է գտնվի ջրչափի կամ վաքի շեմքի ճիշտ մակարդակի վրա,
- բահի օգնությամբ պետք է հարթել հատակը և կողերը բարձրացնել՝ հողե թումբ պատրաստելով, որպեսզի չափվող ջուրն ամբողջովին անցնի ջրաչափի հատվածքով:



Ստորև բերվում է «ՅԱԳՅՈՒՍ» կամ «Յագաթ» տիպի ջրաչափերի միջոցով ջրի չափման մեթոդը, որի միջոցով իրականացվում է գործնական ջրաչափությունը դաշտում:

Չափումների իրականացումը: Ջրաչափով ջրի ելքերի հաշվառումը կատարելու համար անհրաժեշտ է՝ կախված ջրվող հողատարածքի մակերեսից, ժամանակ առ ժամանակ գրանցել ջրաչափով անցնող ջրի մակարդակները և դրանց միջին ցուցանիշով՝ համաձայն աղյուսակի, որոշել ստացած ջրի ծավալը, կախված ջրման տևողությունից, հետևյալ բանաձևով՝

Ըստ լ/վրկ և տրված ժամերով ջրի ծախսը՝ մետր խորանարդով

լ/վրկ / ժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	3.6	7.2	10.8	14.4	18	21.6	25.2	28.8	32.4	36	39.6	43.2	46.8	50.4	54	57.6	61.2	64.8	68.4	72	75.6	79.2	82.8	86.4
2	7.2	14.4	21.6	28.8	36	43.2	50.4	57.6	64.8	72	79.2	86.4	93.6	101	108	115	122	130	137	144	151	158	166	173
3	10.8	21.6	32.4	43.2	54	64.8	75.6	86.4	97.2	108	119	130	140	151	162	173	184	194	205	216	227	238	248	259
4	14.4	28.8	43.2	57.6	72	86.4	101	115	130	144	158	173	187	202	216	230	245	259	274	288	302	317	331	346
5	18	36	54	72	90	108	126	144	162	180	198	216	234	252	270	288	306	324	342	360	378	396	414	432
6	21.6	43.2	64.8	86.4	108	130	151	173	194	216	238	259	281	302	324	346	367	389	410	432	454	475	497	518
7	25.2	50.4	75.6	101	126	151	176	202	227	252	277	302	328	353	378	403	428	454	479	504	529	554	580	605
8	28.8	57.6	86.4	115	144	173	202	230	259	288	317	346	374	403	432	461	490	518	547	576	605	634	662	691
9	32.4	64.8	97.2	130	162	194	227	259	292	324	356	389	421	454	486	518	551	583	616	648	680	713	745	778
10	36	72	108	144	180	216	252	288	324	360	396	432	468	504	540	576	612	648	684	720	756	792	828	864
11	39.6	79.2	119	158	198	238	277	317	356	396	436	475	515	554	594	634	673	713	752	792	832	871	911	950
12	43.2	86.4	130	173	216	259	302	346	389	432	475	518	562	605	648	691	734	778	821	864	907	950	994	1037
13	46.8	93.6	140	187	234	281	328	374	421	468	515	562	608	655	702	749	796	842	889	936	983	1030	1076	1123
14	50.4	101	151	202	252	302	353	403	454	504	554	605	655	706	756	806	857	907	958	1008	1058	1109	1159	1210
15	54	108	162	216	270	324	378	432	486	540	594	648	702	756	810	864	918	972	1026	1080	1134	1188	1242	1296
16	57.6	115	173	230	288	346	403	461	518	576	634	691	749	806	864	922	979	1037	1094	1152	1210	1267	1325	1382
17	61.2	122	184	245	306	367	428	490	551	612	673	734	796	857	918	979	1040	1102	1163	1224	1285	1346	1408	1469
18	64.8	130	194	259	324	389	454	518	583	648	713	778	842	907	972	1037	1102	1166	1231	1296	1361	1426	1490	1555
19	68.4	137	205	274	342	410	479	547	616	684	752	821	889	958	1026	1094	1163	1231	1300	1368	1436	1505	1573	1642
20	72	144	216	288	360	432	504	576	648	720	792	864	936	1008	1080	1152	1224	1296	1368	1440	1512	1584	1656	1728
21	75.6	151	227	302	378	454	529	605	680	756	832	907	983	1058	1134	1210	1285	1361	1436	1512	1588	1663	1739	1814
22	79.2	158	238	317	396	475	554	634	713	792	871	950	1030	1109	1188	1267	1346	1426	1505	1584	1663	1742	1822	1901
23	82.8	166	248	331	414	497	580	662	745	828	911	994	1076	1159	1242	1325	1408	1490	1573	1656	1739	1822	1904	1987
24	86.4	173	259	346	432	518	605	691	778	864	950	1037	1123	1210	1296	1382	1469	1555	1642	1728	1814	1901	1987	2074
25	90	180	270	360	450	540	630	720	810	900	990	1080	1170	1260	1350	1440	1530	1620	1710	1800	1890	1980	2070	2160
26	93.6	187	281	374	468	562	655	749	842	936	1030	1123	1217	1310	1404	1498	1591	1685	1778	1872	1966	2059	2153	2246
27	97.2	194	292	389	486	583	680	778	875	972	1069	1166	1264	1361	1458	1555	1652	1750	1847	1944	2041	2138	2236	2333
28	101	202	302	403	504	605	706	806	907	1008	1109	1210	1310	1411	1512	1613	1714	1814	1915	2016	2117	2218	2318	2419
29	104	209	313	418	522	626	731	835	940	1044	1148	1253	1357	1462	1566	1670	1775	1879	1984	2088	2192	2297	2401	2506
30	108	216	324	432	540	648	756	864	972	1080	1188	1296	1404	1512	1620	1728	1836	1944	2052	2160	2268	2376	2484	2592

6 ✎ ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՋՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

W = 3.6 Q T

որտեղ՝ W-ն ջրի ծավալն է (խ.մ), Q-ն՝ միջին ելքը (լ/վրկ) (համաձայն աղ.), T-ն՝ ջրման տևողությունը (ժամ), 3.6-ը՝ գործակից, որով լ/վ-ը վեր է ածվում խ.մ/ժամ-ի:

Ստանալով օգտագործված ջրի ծավալը՝ ջրօգտագործողը ջրբաշխի մատյանում ստորագրում է և, դրան համապատասխան, փոստային բաժանմունքում կատարում ոռոգման համար օգտագործված ջրի վարձի մուծումներ:

Օրինակ՝ ջրօգտագործողը T = 4 ժամ ջուր է ստացել դաշտը ջրելու համար: Առաջին ժամվա միջին մակարդակը կազմել է 15 սմ, որին, ըստ աղյուսակի, համապատասխանում է 22.6 լ/վ ելք,

II - րդ՝ 13սմ ------ 18.1 լ/վ,
III - րդ՝ 15 սմ ------ 22.6 լ/վ,
IV - րդ՝ 14 սմ ------ 20.3 լ/վ:

Ունենալով ըստ ժամերի ելքերը՝ ջրօգտագործողը կհաշվարկի իր ստացած միջին ելքը՝

$Q_{միջ}$ = / 22.6 + 18.1+ 22.6 + 20.3/ 4= 20.9 լ/վ,

Դրանից հետո նա կարող է վերը նշված բանաձևով հաշվարկել ստացած ջրի ծավալը՝

W = 3.6 x $Q_{միջ}$ x T = 3.6 x 20.9 x 4 = 301 խ.մ:

Ըստ այս հաշվարկի, ջրօգտագործողը ջրբաշխի մատյանում պետք է ստորագրի 301 խ.մ ստացած ջրի համար և դրան համապատասխան վճարումներ կատարի փոստային բաժանմունքում:

Դաշտային պայմաններում, ջրբաշխների աշխատանքները հեշտացնելու համար, կազմվել է աղյուսակ՝ ըստ լ/վրկ-ի և տրված ժամերով ջրի ծախսը մետր խորանարդով հաշվելու համար:

Օրինակ՝ ջրօգտագործողն իր հողատարածքը ոռոգել է 9 ժամում և օգտագործել միջինը 27.0 լ/վրկ քանակությամբ ջուր: Որպեսզի ջրօգտագործողը չընկնի վերևում բերված հաշվարկների մեջ, նա աղյուսակի առաջին սյունակի 27.0 լ/վրկ վանդակից հորիզոնական գնում է դեպի աջ, մինչև հատվի ժամը 9 սյունակի վանդակի հետ, որտեղ գրված է 875.0 խ.մ, ահա այդ էլ կլինի իր կողմից օգտագործված ջրի քանակությունը:

լ/վրկ \ ժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
31	112	223	335	446	558	670	781	893	1004	1116	1228	1339	1451	1562	1674	1786	1897	2009	2120	2232	2344	2455	2567	2678
32	115	230	346	461	576	691	806	922	1037	1152	1267	1382	1498	1613	1728	1843	1958	2074	2189	2304	2419	2534	2650	2765
33	119	238	356	475	594	713	832	950	1069	1188	1307	1426	1544	1663	1782	1901	2020	2138	2257	2376	2495	2614	2732	2851
34	122	245	367	490	612	734	857	979	1102	1224	1346	1469	1591	1714	1836	1958	2081	2203	2326	2448	2570	2693	2815	2938
35	126	252	378	504	630	756	882	1008	1134	1260	1386	1512	1638	1764	1890	2016	2142	2268	2394	2520	2646	2772	2898	3024
36	130	259	389	518	648	778	907	1037	1166	1296	1426	1555	1685	1814	1944	2074	2203	2333	2462	2592	2722	2851	2981	3110
37	133	266	400	533	666	799	932	1066	1199	1332	1465	1598	1732	1865	1998	2131	2264	2398	2531	2664	2797	2930	3064	3197
38	137	274	410	547	684	821	958	1094	1231	1368	1505	1642	1778	1915	2052	2189	2326	2462	2599	2736	2873	3010	3146	3283
39	140	281	421	562	702	842	983	1123	1264	1404	1544	1685	1825	1966	2106	2246	2387	2527	2668	2808	2948	3089	3229	3370
40	144	288	432	576	720	864	1008	1152	1296	1440	1584	1728	1872	2016	2160	2304	2448	2592	2736	2880	3024	3168	3312	3456
41	148	295	443	590	738	886	1033	1181	1328	1476	1624	1771	1919	2066	2214	2362	2509	2657	2804	2952	3100	3247	3395	3542
42	151	302	454	605	756	907	1058	1210	1361	1512	1663	1814	1966	2117	2268	2419	2570	2722	2873	3024	3175	3326	3478	3629
43	155	310	464	619	774	929	1084	1238	1393	1548	1703	1858	2012	2167	2322	2477	2632	2786	2941	3096	3251	3406	3560	3715
44	158	317	475	634	792	950	1109	1267	1426	1584	1742	1901	2059	2218	2376	2534	2693	2851	3010	3168	3326	3485	3643	3802
45	162	324	486	648	810	972	1134	1296	1458	1620	1782	1944	2106	2268	2430	2592	2754	2916	3078	3240	3402	3564	3726	3888
46	166	331	497	662	828	994	1159	1325	1490	1656	1822	1987	2153	2318	2484	2650	2815	2981	3146	3312	3478	3643	3809	3974
47	169	338	508	677	846	1015	1184	1354	1523	1692	1861	2030	2200	2369	2538	2707	2876	3046	3215	3384	3553	3722	3892	4061
48]	173	346	518	691	864	1037	1210	1382	1555	1728	1901	2074	2246	2419	2592	2765	2938	3110	3283	3456	3629	3802	3974	4147
49	176	353	529	706	882	1058	1235	1411	1588	1764	1940	2117	2293	2470	2646	2822	2999	3175	3352	3528	3704	3881	4057	4234
50	180	360	540	720	900	1080	1260	1440	1620	1800	1980	2160	2340	2520	2700	2880	3060	3240	3420	3600	3780	3960	4140	4320
51	184	367	551	734	918	1102	1285	1469	1652	1836	2020	2203	2387	2570	2754	2938	3121	3305	3488	3672	3856	4039	4223	4406
52	187	374	562	749	936	1123	1310	1498	1685	1872	2059	2246	2434	2621	2808	2995	3182	3370	3557	3744	3931	4118	4306	4493
53	191	382	572	763	954	1145	1336	1526	1717	1908	2099	2290	2480	2671	2862	3053	3244	3434	3625	3816	4007	4198	4388	4579
54	194	389	583	778	972	1166	1361	1555	1750	1944	2138	2333	2527	2722	2916	3110	3305	3499	3694	3888	4082	4277	4471	4666
55	198	396	594	792	990	1188	1386	1584	1782	1980	2178	2376	2574	2772	2970	3168	3366	3564	3762	3960	4158	4356	4554	4752
56	202	403	605	806	1008	1210	1411	1613	1814	2016	2218	2419	2621	2822	3024	3226	3427	3629	3830	4032	4234	4435	4637	4838
57	205	410	616	821	1026	1231	1436	1642	1847	2052	2257	2462	2668	2873	3078	3283	3488	3694	3899	4104	4309	4514	4720	4925
58	209	418	626	835	1044	1253	1462	1670	1879	2088	2297	2506	2714	2923	3132	3341	3550	3758	3967	4176	4385	4594	4802	5011
59	212	425	637	850	1062	1274	1487	1699	1912	2124	2336	2549	2761	2974	3186	3398	3611	3823	4036	4248	4460	4673	4885	5098
60	216	432	648	864	1080	1296	1512	1728	1944	2160	2376	2592	2808	3024	3240	3456	3672	3888	4104	4320	4536	4752	4968	5184

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
ջրաչափության մասնագետ Ժ. Թամրազյան

ՀՐԱՎԵՐ

ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ Է ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ձեռներեցները հրավեր են ստացել՝ մասնակցելու «Չինաստան-Եվրասիա» էքսպոյին, որը տեղի կունենա սեպտեմբերի 1-6-ը՝ Չինաստանի Ուրումչի քաղաքում: Ինչպես նշել է «Չինաստան-Եվրասիա» էքսպոյի գործադիր կոմիտեի նախագահ, Սինցզյանի արտադրական-շինարարական կորպորացիայի հանձնակատարի տեղակալ Սյու Վեյխուան, այս խոշոր միջոցառմանը հայ ձեռներեցների մասնակցությունը կարող է նպաստել հայ-չինական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանն ու ամրապնդմանը:

«Հայաստան մեր պատվիրակության այցի նպատակն է՝ ծանոթացնել հայկական ընկերություններին «Չինաստան-Եվրասիա» չորրորդ էքսպոյի մասնակցության հնարավորություններին և պայմաններին, ինչպես նաև ամրապնդել հայ-չինական տնտեսական համագործակցությունը, մասնավորապես՝ հայ ձեռներեցների հարաբերությունների ամրապնդմանը Սինցզյանի արտադրական-շինարարական կորպորացիայի (ՍԱՇԿ) հետ»,- նշել է Վեյխուան:

Ըստ նրա՝ ՍԱՇԿ-ն, որը «Չինաստան-Եվրասիա -2014» էքսպոյի կազմակերպիչներից է, Չինաստանի և եվրասիական այլ երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման հզոր շարժիչ ուժն է: Օգտագործելով Սինցզյան գավառի բնական և տուրիստական ռեսուրսների ներուժն, ինչպես նաև այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման հնարավորությունները՝ ՍԱՇԿ-ն առաջարկում է համագործակցության ամենաշահավետ պայմանները բոլոր շահագրգիռ կողմերի համար: «Չինաստան-Եվրասիա» էքսպոն նոր կյանք է տալիս Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտուն, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում Սինցզյանի անդրսահմանային զարգացման և այլ երկրների հետ համագործակցության համար»,- հայտարարել է Վեյխուան:

1954թ.-ին ստեղծված Սինցզյանի արտադրական-շինարարական կորպորացիան ունի 80 հազար քառակուսի կիլոմետր մակերեսով տարածք՝ 2,7 մլն. բնակչությամբ, որտեղ գործում են 175 ֆերմերային տնտեսություններ, արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության և առևտրի ոլորտում գործող 3 հազար ձեռնարկություններ, գիտատեխնիկական ակադեմիա և կրթության, մշակույթի, առողջապահության մի շարք հաստատություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԳՐՈՆՈՄԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Ագրոնոմիա
- Բույսերի պաշտպանություն
- Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա
- Ագրոէկոլոգիա

*Մաթեմատիկա (գ) կամ կենսաբանություն (գ), կենսաբանություն **(գ) կամ քիմիա **(գ), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու **

- Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում

*Մաթեմատիկա (գ) կամ ֆիզիկա (գ), քիմիա **(գ) կամ կենսաբանություն **(գ), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու **

ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա
- Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն
- Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա
- Մսի և մսամթերքի տեխնոլոգիա
- Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա
- Ձկան և ձկնամթերքի տեխնոլոգիա
- Մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա
- Կաշվի և մորթու տեխնոլոգիա
- Գյուղատնտեսական և պարենային արտադրանքի փաթեթավորման տեխնոլոգիա և դիզայն
- Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում

*Մաթեմատիկա (գ), քիմիա **(գ) կամ ֆիզիկա **(գ), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու **

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Անասնաբուժություն
- Անասնաբուծություն
- Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն

*Մաթեմատիկա (գ) կամ կենսաբանություն (գ), կենսաբանություն **(գ) կամ քիմիա **(գ), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու **

* հայոց լեզվի (ոչ մրցութային քննության) գնահատականը փոխանցվում է ատեստատից,
** նշված առարկաներից քննություն հանձնողները մրցույթով ընդունվում են առաջին հերթին:

Այս (✪) նշանով նշված մասնագիտություններով անվճար ուսուցման համակարգ ընդունվելու համար դիմորդը հանձնում է մեկ միասնական քննություն: Մեկ (*) և երկու (**) աստղանիշերով առարկաների գնահատականը հայտագրվում է ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից: Նշված մասնագիտություններով երկու աստղանիշով առարկան լրացուցիչ հանձնելու դեպքում, դիմորդն օգտվում է առաջնահերթ ընդունվելու արտոնությունից: Նույն մասնագիտությունների վճարովի ուսուցման համակարգ դիմորդը կարող է ընդունվել առանց միասնական քննություններ հանձնելու՝ որպես մրցութային առարկաների գնահատականներ հայտագրելով ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի նշված առարկաների քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնատահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Այն դիմորդներն, ովքեր իրենց ցանկությամբ միասնական կարգով կհանձնեն տվյալ մասնագիտության մրցութային առարկան, կընդունվեն վճարովի համակարգ՝ օգտվելով առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

Համալսարանի մյուս մասնագիտություններում, նախորդ տարվա համեմատ, փոփոխություն չի կատարվել:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (010) 52 15 65, (010) 52 24 32:
Կայք՝ www.anau.am Էլ. փոստ՝ info@anau.am Հասցե՝ ք. Երևան, Տերյան 74

ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐՈՒՅԹ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Գյուղատնտեսության մեքենայացում
- Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ
- Փոխադրումների կազմակերպումն ու կառավարումն ագրոպարենային համակարգում
- Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացում և ավտոմատացում
- Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում

*Մաթեմատիկա (գ), ֆիզիկա **(գ), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու **

ՀԻԴՐՈՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանում
- Հողաշինարարություն և հողային կադաստր
- Կենսագործունեության անվտանգություն և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում

*Մաթեմատիկա (գ), ֆիզիկա **(գ), ոչ մրցութային քննություն՝ հայոց լեզու **

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում
- Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ
- Սննդարդյունաբերության էկոնոմիկա և կառավարում
- Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում
- Հողագույքային հարաբերություններ

Մաթեմատիկա (գ), հայոց լեզու (գ), օտար լեզու (գ)

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

- Ագրոբիզնես և շուկայաբանություն
- Ագրարային քաղաքականություն և տարածաշրջանի զարգացում
- ԱՊՀ խորհրդատվություն և տեղեկատվություն
- Ապահովագրական գործ
- Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն

Մաթեմատիկա (գ), հայոց լեզու (գ), օտար լեզու (գ)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն (ԳԱՀԿ) հրավիրում է ավտոմեքենաների աճուրդային վաճառքի

1. Ավտոմեքենա 1990 թ. արտադրության ՎԱԶ-2121, շարժիչը՝ 1588387, թափքը՝ 0828673 , գույնը՝ սպիտակ, մեկնարկային գինը՝ 220,0 հազ. դրամ;

2. Ավտոմեքենա 1996 թ. արտադրության ԳԱԶ-31029, շարժիչը՝ 0064239, թափքը՝ 433197, գույնը՝ սև, մեկնարկային գինը՝ 100,0 հազ. դրամ;

3. Ավտոմեքենա 2000 թ. արտադրության ՎԱԶ-21213, շարժիչը՝ 5944263, թափքը 1496933, գույնը՝ սպիտակ, մեկնարկային գինը՝ 430,0 հազ. դրամ:

Աճուրդը տեղի կունենա «ԳԱՀԿ» ՓԲԸ ընկերությունում, 2014 թ. հունիսի 18-ին, ժամը 15.00-ին: Երևան, Մամիկոնյանց 39ա , 6-րդ հարկ:

Աճուրդային հանձնաժողով

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի
2014թ. բաժանորդագրությունը

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվա գինը՝ 1980 դրամ
1 եռամսյակը՝ 120 դրամ

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվա գինը՝ 4050 դրամ
1 եռամսյակը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հարիսատ», «Հայմամուլ», «Դրեամ-Արտաշես» կոշտմակնիքագրությունները:

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Լիանա Շախնազարյան

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 68
ստորագրված է տպագրության 25.05.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա